Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի հունիսի 6 –ի
№ 308Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձինք, բացառությամբ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց (այսուհետ՝ լիցենզավորված անձինք) լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) են ներկայացնում համաձայն սույն կարգի №1 հավելվածով սահմանված լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ցանկի և № 2 հավելվածով սահմանված 2-1, 2-2, 2-3, 2-4, 2-5, 2-6, 2-7, 2-8, 2-9, 2-10, 2-11, 2-12, 2-13, 2-14 ձևերի:
2. Լիցենզավորված անձինք ներկայացնում են սույն կարգի № 2 հավելվածի՝
   1) 2-3, 2-4, 2-5, 2-6, 2-11, 2-13 և 2-14 ձևերով սահմանված տեղեկատվությունը՝ ամսական կտրվածքով՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25 –ը,
   2) 2-1, 2-7, 2-8, 2-9, 2-10, 2-12 ձևերով սահմանված տեղեկատվությունը՝ ամսական կտրվածքով և աճողական (ընթացիկ տարվա սկզբից)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25 –ը,
   3) 2-2 ձևով սահմանված տեղեկատվությունը՝ եռամսյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25 –ը:
3. Լիցենզավորված անձը մեկից ավելի փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեություն իրականացնելու դեպքում, սույն կարգի №2 հավելվածի 2-2 ձևով

սահմանված տեղեկատվությունը ներկայացնում է յուրաքանչյուր փոքր հիդրոէլեկտրակայանի համար առանձին:

4. Ներկայացվող տեղեկատվությունը նախնական փաստաթղթային ստուգում է անցնում հանձնաժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից և սույն կարգի պահանջներին համապատասխանության դեպքում «Նախնական ստուգում անցած է» նշումով մուտքագրվում է հանձնաժողովում:
5. Ներկայացված տեղեկատվության նախնական փաստաթղթային ստուգման արդյունքում սույն կարգի պահանջներին անհամապատասխանություններ, անճշտություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում տեղեկատվությունը վերադարձվում է լիցենզավորված անձին, որը հայտնաբերած թերությունները շտկելուց հետո, հնգօրյա ժամկետում, ներկայացնում է հանձնաժողով:
6. Լիցենզավորված անձինք տեղեկատվությունը հանձնաժողով են ներկայացնում նաև էլեկտրոնային տարբերակով:
7. Հանձնաժողովը, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը, ամփոփ տեսքով հրապարակում է լիցենզավորված անձանց ներկայացրած յուրաքանչյուր եռամսյակի տեխնիկատնտեսական տեղեկատվությունն ըստ ամիսների: